թայի եկեղեցական վարչության ֆինանսական օժանդակությամբ ամբողջովին վերանորոգվել է ննջարանային համալիրը:

Բացման արարողությունից հետո Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը շնորհակալություն հայտնեց Ս. Նազարեթ եկեղեցու վարչությանը գործուն աջակցության համար՝ հույս հայտնելով, որ հարմարավետ և վերանորոգված նոր ննջարանը պիտի նպաստի ճեմարանական աղջիկների ուսումնառությանը:

Ներկաներին իր սրտի խոսքն ասաց նաև ՀՀ դեսպանը: Նա, շնորհավորելով աղջիկներին այս նշանակալից իրադարձության համար, ընդգծեց, որ ակնառու են վերջին մեկ տարվա ընթացքում ճեմարանի նոր ղեկավարության հաջողությունները՝ ուժ և կորով մաղթելով ճեմարանի կառավարիչ Հայր Սուրբին և ճեմարանի վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանին:

Բացման հանդիսությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական վարչության անդամները, իրանահայ ուխտավորներ և նախկին ճեմարանականներ:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Նոյեմբերի 11-ին Կալկաթայի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում, հանդիսապետությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի և մասնակցությամբ նախկին ճեմարանական, Բրիտանական գրադարանի Քրիստոնյա Արևելքի բաժանմունքի ղեկավար Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանի, կատարվեց անդաստան և հոգեհանգիստ՝ հնդկահայ գաղութի ննջեցյալների և բարերարների հոգու հանգստության համար:

Եկեղեցին հիմնադրվել է 1906 թ. և օծվել Հայոց աշխարհի երկրորդ Լուսավորիչ և մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի անունով: «Դամբանական մատուռը» կառուցվել է Ս. Նազարեթ եկեղեցու և Կալկաթայի համայնքի մի շարք անդամների ֆինանսական աջակցությամբ: Հիմնարկեքը կատարվել է Պարսկահնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սահակ արքեպս. Այվատյանի ձեռամբ՝ առընթերակից ունենալով երեք քահանաների:

Հոգեհանգստից հետո ներկաներին իր սրտի խոսքն ասաց Տ. Ներսես քահանան, ով երկար տարիներ և՛ որպես Մարդասիրական ճեմարանի սան, և՛ որպես սպասարկու սարկավագ իր ծառայությունն է բերել կալկաթահայությանը: Տեր Հայրն իր խոսքում անդրադարձավ այն պատմական իրողությանը, որ մեր նախնիք միշտ նախ կառուցել են եկեղեցի՝ որպես հավատքի վկայարան, և ապա՝ դպրոց՝ որպես մտքի լուսավորության աղբյուր: Նա նաև քաջառողջություն և երկար տարիների կյանք մաղթեց սակավաթիվ կալկաթահայերին, որոնց շնորհիվ ապրում և գոյատևում է հնդկահայ գաղութը: Հոբելյանին անդրադարձավ նաև Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբն ամենքին շնորհավորեց հոբելյանի կապակցությամբ, անդրադարձավ Հայոց Եկեղեցու մեծ դերակատարությանը հնդկահայության կյանքում՝ իր գնա-

հատանքը հայտնելով Կալկաթայի եկեղեցական խորհրդին, որ ջանասիրությամբ իրենց կարելին են անում՝ պահպանելու և նոր շունչ հաղորդելու համար գաղութին:

Այնուհետև ներկաներն ուղղվեցին դեպի Ս. Նազարեթ եկեղեցու և Մարդասիրական ճեմարանի մեծ բարերար Խաչիկ Աստվածատուրյանի գերդաստանին նվիրված դամբարան, ուր հոգեհանգստյան աղոթք բարձրացվեց մեծ բարերարի և նրա հարազատների հոգիների հանգստության համար: Հոգեհանգիստ կատարվեց նաև եկեղեցու հարևանությամբ գտնվող հայկական գերեզմանատանը:

Արարողություններին ներկա էին Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանն՝ իր տիկնոջ հետ, Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, Իրանից ժամանած շուրջ 40 ուխտավորներ, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաներ:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՆԱԶԱՐԵԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՆԵՐԻ ՀՈԳՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 12-ին Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 185-ամյակի և Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու հիմնադրման 100-ամյակի առիթով Անգլիայից ժամանած նախկին ճեմարանական, Բրիտանական գրադարանի Քրիստոնյա Արևելքի բաժանմունքի ղեկավար Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը: Սրբազան արարողության ընթացքում պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: Նա մասնավորապես ընդգծեց, որ շատ կարևոր է մարդկային հիշողությունը, ուստի մենք պարտավոր ենք միշտ երախտագիտությամբ հիշելու այն մարդկանց, ովքեր հիմնադրեցին Մարդասիրական ճեմարանը հայրենիքից այդքան հեռու՝ մեր գործերով և ուսումնատենչությամբ պատիվ բերելով 185-ամյա կրթական հաստատությանը:

Ս. Պատարագից հետո Մարդասիրական ճեմարանի հիմնադիր բարերար Աստվածատուր Մուրադխանյանի գերեզմանին կատարվեց հոգեհանգիստ՝ ճեմարանի բարերարների հոգու հանգստության համար: Արարողությունից հետո ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն անդրադարձավ Մարդասիրական ճեմարանի հիմնադրման պատմությանը՝ մեկ անգամ ևս հատկապես ճեմարանականներին հորդորելով իրենց կյանքում միշտ մտապահել ճեմարանի հիմնադիր ջուղայեցի վաճառական Աստվածատուր Մուրադխանյանի և մյուս բարերարների հիշատակը, որոնք երբեք չմոռացան օտար հողում հայ պատանիների հայեցի կրթության և Հայոց Եկեղեցուն յուրովսանն աջակցելու մասին:

Ելույթ ունեցավ նաև Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանը: Նա շնորհավորեց ներկաներին զույգ հոբելյանների կապակցությամբ՝ անդրադառնալով հայ-հնդկական դարավոր բարեկամությանը՝ այդ գործում մասնավորապես ընդգծելով կալկաթահայության, Մարդասիրական ճեմարանի և Հայոց Եկեղեցու մեծ դերակատարությունները: